«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

# Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր

Ծրագիր Հ. 610-1182



# ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

I Եռամսյակ, 2015թ.

FICHTNER
WATER & TRANSPORTATION

«ՋՐՏՈՒՔ» ՍՊԸ

## Բովանդակություն

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ...... 1-1**
**2. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ...... 2-1**
2.1 Հաշվետու ժամանակաշրջանում բողոքները և վերջիններիս լուծումները ...... 2-2
**3. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ...... 3-1**
Հավելված 1: Նկարներ

## Աղյուսակներ

Աղյուսակ 1-1: Համայնքների ցանկ ...... 1-1
Աղյուսակ 4-1: Հանդիպումների ցանկ ...... 2-1

# Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ՀՓՀՋԾ | Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր |
| ՀՋԿ | «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ |
| ՎԶԵԲ | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ |
| Պատվիրատու | «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ |
| ՆԾՀՏ | Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն |
| Խորհրդատու | Fichtner Water & Transportation GmbH՝ «Ջրտուր» ՍՊԸ-ի հետ |
| ՇԿՆՊ | Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան |
| FWT | Fichtner Water & Transportation GmbH |
| ԿՄԿ | Կեղտաջրերի մաքրման կայան |

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը, շարունակելով համագործակցությունը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ 2011 թվականին մշակել է «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիրը» այնուհետև Ծրագիր (գործառնական համար 40718), որը ներառում է (ա) Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձոր մարզերում համայնքային ջրամատակարարման համակարգերի բարելավում (բ) կեղտաջրերի մաքրման կայանների վերանորոգում Տավուշ (Դիլիջան քաղաք) և Վայոց Ձոր (Ջերմուկ քաղաք) մարզերում:

«Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագիրը» կիրականացվի հետևյալ համայնքներում:

**Աղյուսակ 1-1: Համայնքների ցանկ**

| Հ | Մարզ | Համայնք |
|---|---|---|
| 1. | Տավուշ | Իջևան |
| | | Ազատամուտ |
| | | Դիլիջան |
| 2. | Լոռի | Ախթալա |
| | | Սպիտակ |
| | | Ջրաշեն |
| | | Տաշիր |
| 3. | Շիրակ | Արթիկ |
| 4. | Գեղարքունիք | Սևան |
| | | Ճամբարակ |
| | | Գավառ |
| | | Սարուխան |
| | | Մարտունի |
| 5. | Կոտայք | Բյուրեղավան |
| | | Աբովյան |
| 6. | Սյունիք | Կապան |
| 7. | Վայոց ձոր | Ջերմուկ |

Ծրագրի նպատակների ժամանակին և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով մրցույթային կարգով ընտրվեց Խորհրդատու (ՀՁ Fichtner Water & Transportation GmbH/ «Ջրտուք» ՍՊԸ), որը աջակցում է ՀՋԿ ՓԲԸ-ին նախագծի պատրաստման, տեխնիկական հսկողության, գնումների, վճարումների, և բոլոր այլ տիպի գործառույթների իրականացման ընթացքում: 2012 թվականի մարտի 21-ին, Ֆիխտներ Ուոթեր և Տրանսպորտեյշն – Ջրտուք ՍՊԸ կոնսորցիումի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջև կնքվեց Խորհրդատվական պայմանագիր «Ինժեներատեխնիկական աշխատանքներ, նախագծում և պայմանագրի վերահսկողություն» հիշյալ Ծրագրի համար:

Որպես ծրագրի նախաձեռնող, «ՀՋԿ ՓԲԸ-ի» ներկայացնող կոնտակտային անձն է՝
Պրն. Նորիկ Գևորգյան

Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինության տնօրեն

Վարդանանց Փակուղի 8ա, Երևան 0010
Հեռ/Ֆաքս + 374 10 542 877
ngevorgyan@armwater.am

# 2. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Տեխնիկական և հեղինակային հսկողության շրջանակներում խորհրդատուի թիմը իրականացրել է դաշտային այցելություններ շին. հրապարակներ, հանդիպումներ է ունեցել Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձորի մարզերի Իջևան, Ազատամուտ, Դիլիջան, Տաշիր, Ախթալա, Սպիտակ, Գավառ, Մարտունի, Ճամբարակ, Ջերմուկ և Կապան համայնքներում:

Սույն թվականի I եռամսյակում տեղի ունեցած դաշտային այցելությունների և հանդիպումների ժամանակ քննարկվել և պարզաբանվել են ինչպես տեխնիկական, այնպես էլ բնապահպանական հարցեր: Դաշտային այցելությունների, հանդիպումների նկարները ներկայացված են հավելված 1-ում:

Ստորև ներկայացվում են հանդիպումները աղյուսակով:

**Աղյուսակ 2-1: Հանդիպումների ցանկ**

| Ամսաթիվ | Հանդիպման վայր | Մասնակիցներ | Հիմնական նպատակ |
|---|---|---|---|
| 23.01.2015 | Իջևան, Ազատամուտ | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ, Իջևան մ/ճ, կապալառու | Հեղինակային հսկողություն, տեղանքի հետախուզում |
| 27.01.2015 | Դիլիջան | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ, Դիլիջան մ/ճ, կապալառու | Հեղինակային հսկողություն, տեղանքի հետախուզում |
| 30.01.2015 | Երևան | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ | Քննարկում Խորհրդատուի պայմանագրի փոփոխման վերաբերյալ |
| 03.02.2015 | Ջերմուկ | Խորհրդատու / ՀՋԿ Ջերմուկ մ/ճ | Լրացուցիչ խողովակաշարերի ուսումնասիրում |
| 03-04.02.2015 | Կապան | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ | Հեղինակային հսկողություն, տեղանքի հետախուզում |
| 12.02.2015 | Գավառ | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ, Գավառ մ/ճ, կապալառու | Լրացուցիչ խողովակաշարերի ուսումնասիրում |
| 13.02.2015 | Դիլիջան | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ, Դիլիջան մ/ճ, կապալառու | Լրացուցիչ խողովակաշարերի ուսումնասիրում |
| 19.02.2015 | Իջևան | Խորհրդատու / ՀՋԿ Իջևան մ/ճ | Լրացուցիչ խողովակաշարերի ուսումնասիրում |
| 24.02.2015 | Տաշիր | Խորհրդատու / ՀՋԿ Տաշիր մ/ճ | Նոր ջրատարի ուսումնասիրում |
| 26.02.2015 | Երևան | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ | ՓՊ-ի վերաբերյալ քննարկում |
| 03.03.2015 | Արթիկ | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ | Հեղինակային հսկողություն |
| 04.03.2015 | Ազատամուտ | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ | Հեղինակային հսկողություն |
| 20.03.2015 | Իջևան, Ազատամուտ | Խորհրդատու / ՀՋԿ ՆԾՀՏ, Իջևան մ/ճ, կապալառու | Հեղինակային հսկողություն |
| 30.03.2015 | Դիլիջան | Խորհրդատու / ԵՄ պատվիրակություն | Դիլիջան ԿՄԿ-ի տեղանքի հետախուզում |
| 31.03.2015 | Իջևան | Խորհրդատու / ԵՄ պատվիրակություն | Տեղանքի հետախուզում |

Հսկողության շրջանակներում ստուգվել է նախագծային լուծումների համապատասխանությունը փաստացի կատարված շինարարական աշխատանքների հետ, ինչպես նաև բնապահպանական միջոցառումների իրականացումը համաձայն ՇՄԿՊ-ի: Կապալառուների հետ քննարկվել են նախագծի վերաբերյալ նրանց առաջարկներն ու դիտողությունները:

## 2.1 Հաշվետու ժամանակաշրջանում բողոքները և վերջիններիս լուծումները

Հաշվետու ժամանակաշրջանում բողոքներ, առաջարկություններ չեն գրանցվել:

# 3. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1:** Error! Reference source not found.

**Հավելված 1:** Նկարներ



Ջերմուկ: ԿՄԿ



Դիլիջան: Պոմպակայան



Կապան: Քննարկում լրացուցիչ ջրագծերի նախագծման վերաբերյալ